Հիմնական դասընթացի ուսուցում

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԱՒՍ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Օգտագործման պայմանները (թարմացվել է՝ 2021-13-04) Գաղտնիության ծանուցում (թարմացվել է՝ 2021-06-04)
© 2021 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.

Հիմնական դասընթացի ողջույնի խոսք և արդյունքներ

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ

Ողջունում ենք «ուսուցանել Ինստիտուտի Հիմնական դասընթացները» նյութի ուսուցմանը: Շնորհակալություն, որ ընդունեցիք ձեր ուսանողներին օգնելու հնարավորությունը՝ ամրապնդելու իրենց դարձն առ Հիսուս Քրիստոսը և Նրա վերականգնված ավետարանը:

ՈՒՍՈՒՑՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Ուսուցումից առաջ դուք պիտի.

- Վերանայեք Հիմնական դասընթացների ուսուցման Արագ մեկնարկի ուղեցույցը
- Ուշադիր ուսումնասիրեք Ուսուցչի Նյութի նախաբանը:
- Ձեր համակարգողի կամ ինստիտուտի տնօրենի հետ ժամանակ հատկացրեք և քննարկեք ձեր առաջադրանքը, ուսանողներին, դասընթացը և ցանկացած հարց, որը դուք ունեք:
- Աղոթեք առաջնորդության համար, որպեսզի օգնեք ձեր ուսանողներին գալ Քրիստոսի մոտ և ավելի նմանվել Նրան:

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կան շատ սկզբունքներ և հմտություններ, որոնք կարևոր են արդյունավետ ուսուցման համար: Դուք կարող եք շարունակել ուսումնասիրել սկզբունքները և կիրառել սեմինարիայի և ինստիտուտի ձեռնարկներում ուսուցանվող

հմտությունները: Այս ծառայողական ուսուցման նպատակների համար կսահմանվեն, կցուցադրվեն և կկիրառվեն Ինստիտուտի Հիմնական դասընթացների ուսուցմանը վերաբերող մի քանի կարևոր հմտություններ, որոնք կօգնեն ձեզ ծանոթանալ դասընթացին և ուսումնական ծրագրին: Այս հմտությունները կօգնեն, որ ձեզ ուսանողները զարգանան և դարձի գան, մինչ փորձում եք օգնել նրանց պատրաստվել, մասնակցել և գործել, որպեսզի օգնեք նրանց նմանվել Փրկիչ Հիսուս Քրիստոսին:



- **Պատրաստվել.** հրավերների միջոցով բարձրացնել ուսանողների պատրաստության մակարդակը
- **Մասնակցել.** ներգրավել ուսանողներին՝ հիմնվելով նրանց պատրաստության վրա
- **Գործել.** կարևորել կիրառությունը

Հրավերների միջոցով բարձրացնել ուսանողների պատրաստության մակարդակը



ՀՄՏՈՒԹՅՈՒՆ. ՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Ինչպե՞ս կբարձրացնեք ուսանողների պատրաստության մակարդակը, որպեսզի բարելավեք դասարանում ունեցած նրանց փորձառությունը։



Կարդացեք այս բաժինները և հետևեք հրահանգներին: Քննարկման պատուհանում գրեք այն, ինչ սովորում եք:

ՍԱՀՄԱՆԵԼ

Հիմնական դասընթացներում Դասի Նախապատրաստական նյութը պետք է ուսումնասիրվի ինչպես ձեր կողմից, այնպես էլ ձեր ուսանողների կողմից՝ դասի նախապատրաստման ժամանակ: Նախապատրաստական նյութը պարունակում է հրավերներ՝ հարցերի և վարժությունների միջոցով ուսանողների և ուսուցիչների պատրաստության մակարդակը բարձրացնելու համար, որը կօգնի խորացնել ուսումը դասարանում և դրանից դուրս: Այդ հրավերներից յուրաքանչյուրին ուղեկցում են պատկերակներ, որոնք կօգնեն ձեզ տեսնել, թե ինչպես և երբ են օգտագործվում այդ հրավերները, և ինչպես կարող եք դասարանում հիմնվել դրանց վրա:

ՆԱԽԱՏԻՊ

Ուսումնական ծրագրում կարող եք գտնել պատրաստվելու հրավերների մի քանի օրինակներ.

Խորհեք դասին նախապատրաստվելիս

Օրինակ. «Ի՞նչ փորձառություններ են օգնել ձեզ իմանալ, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է»:

Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Օրինակ. «Ալմա մարգարեն ժողովրդին ուսուցանեց Փրկիչի Քավության մասին: Կարդացեք Ալմա 7.11-13»:

Գրի առեք ձեր մտքերը

Օրինակ. «Ձեր օրագրի հատկացված տարածքում գրեք մի քանի ճշմարտություններ, որոնք դուք կարևորել եք սուրբ գրություններից և այս բաժնի ուսմունքներից, ինչպես նաև բոլոր այն մտքերն ու հարցերը: Դասարան եկեք պատրաստված՝ ձեր սովորած ճշմարտություններով և գափարներով կիսվելու համար»:

Քննարկեք դասին նախապատրաստվելիս

Օրինակ. «Ընտանիքի անդամի կամ ընկերոջ օգնությամբ բացահայտեք այս հատվածներից ձեր գտած սկզբունքների մի քանի ընթացիկ կիրառություններ: Դասարան եկեք պատրաստ՝ ձեր սովորածով կիսվելու համար»:

Գործեք ըստ ձեր սովորածի

Օրինակ. «Առաջիկա օրերին և շաբաթներին ի՞նչ եք անելու, որպեսզի ուրիշներին ծառայեք Հիսուս Քրիստոսի նման»:

Այժմ, երբ տեսաք, թե ինչպես է ուսումնական ծրագիրը հրավերների միջոցով բարձրացնում ուսանողների պատրաստության մակարդակը, վարժվեք՝ ուսումնական ծրագրում փնտրելով և օգտագործելով այդ հրավերները:

ՎԱՐԺՎԵԼ

Կատարեք հետևյալ քայլերը, որպեսզի գործնականում փնտրեք և օգտագործեք այս հրավերները, որպեսզի բարձրացնեք ուսանողների պատրաստությունը:

1. Դասարանի նախապատրաստական նյութի մեջ գտեք դասը այն դասընթացի համար, որը դուք ուսուցանում եք կամ կուսուցանեք և կարդացեք պատրաստության ներկայացված հրավերները:
2. Ընտրեք այդ հրավերներից որևէ մեկը:
3. Մտածեք, թե այդ վարժությունն ինչպիսի՞ ազդեցություն կունենա ուսանողի պատրաստության վրա: Մտածեք այն մասին, թե ուսանողների փորձառության վրա ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ պատրաստվելու այդ հրավերը՝ դասից առաջ և դասի ժամանակ: Մտածեք այն մասին, թե ինչպե՞ս կարող եք ուսանողներին հրավիրել պատրաստվել հաջորդ դասին՝ օգնելով ուսանողներին բացահայտել պատրաստվելու այդ հրավերները:
4. Բացահայտեք պատրաստվելու մեկ այլ հրավեր և կրկնեք այս գործողությունը:

Պատրաստվելու նման հրավերների և դրանց օգտագործման արդյունավետությանը ծանոթանալով, դուք կկարողանաք կենտրոնանալ ուսանողների վրա և բարձրացնել նրանց պատրաստության մակարդակը՝ ավելի խորը փորձառության ունենալու համար:

ԿԻՐԱՌԵԼ

Երբ ձգտեք հրավերների միջոցով բարձրացնել ուսանողների պատրաստությունը՝ հաշվի առեք հետևյալ հարցերը:

- Ուսուցանելու ժամանակ ինչպե՞ս եք կիրառելու այն, ինչ սովորել եք այս վարժություններից։
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի շարունակեք կիրառել այս հմտությունը և կարողանաք կատարելագործվել որպես ուսուցիչ:

ՔՆՆԱՐԿԵԼ

Ստորև բերված քննարկման պատուհանում գրեք, թե ինչ եք սովորել այդ փորձառությունից: Համոզվեք, որ կարդացել եք ուրիշների գրածները՝ տեսնելու համար, թե ինչ են սովորում և անում ուրիշները:

Ներգրավել ուսանողներին՝ հիմնվելով նրանց պատրաստության վրա։

ՀՄՏՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԳՐԱՎԵԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ՝ ՀԻՄՆՎԵԼՈՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ։

Ինչպե՞ս կներգրավեք ձեր ուսանողներին՝ հիմնվելով այն բանի վրա, թե ինչ են նրանք ուսումնասիրել, սովորել և զգացել դասին պատրաստվելիս։



Կարդացեք այս բաժինները և հետևեք հրահանգներին: Քննարկման պատուհանում գրեք այն, ինչ սովորում եք:

ՍԱՀՄԱՆԵԼ

Հիմնական դասընթացի ընթացքում ուսումնական ծրագիրը կօգնի ձեզ վստահել և հիմնվել ուսանողի պատրաստության վրա: Ուսուցչի նյութի մեջ կան ներգրավելու տարբեր մոտեցումներ, որոնք հրավիրում են ուսանողներին «վերանայել», «հիշել», «պատմել», «կիսվել իրենց պատրաստությունից» և այլն, որպեսզի հիշեցնեն և խրախուսեն ձեզ օգտագործելու ուսանողների հասկացողությունը և պատրաստությունը՝ դասարանային փորձառությունն ուղղորդելու համար:

ՆԱԽԱՏԻՊ

Ուսումնական ծրագրում կարող եք գտնել ներգրավելու այդ մոտեցումների մի քանի օրինակներ.

- «Հրավիրեք ուսանողներին պատմել, թե դասի պատրաստությունից ինչ են հիշում այդ իրավիճակի մասին»:
- «Հիշեցրեք ուսանողներին, որ նախապատրաստական նյութում նրանց խնդրեցին նշել այն ճշմարտությունները, որոնք նշանակալից էին նրանց համար: Ուսանողներին ժամանակ տվեք վերանայելու այդ բաժնում իրենց նշած սուրբ գրությունների հատվածներն ու մարգարեական ուսմունքները: Թող նրանք դասարանի հետ կիսվեն իրենց սովորածով»:
- «Թույլ տվեք ուսանողներին մի քանի րոպե փոքր խմբերով քննարկել, թե ինչպես կօգտագործեն իրենց պատրաստության ընթացքում սովորած նյութը՝ օգնելու համար իրենց ընկերոջը»:

Այժմ, երբ տեսաք, թե ինչպես է ուսումնական ծրագիրն օգնում ձեզ օգտվել ուսանողի պատրաստությունից, վարժվեք՝ ուսումնական ծրագրում փնտրելով ներգրավելու այդ մոտեցումները:

ՎԱՐԺՎԵԼ

Կատարեք հետևյալ քայլերը, որպեսզի գործնականում փնտրեք ներգրավելու այս տիպի մոտեցումները՝ հիմնվելու համար ուսանողների պատրաստության վրա:

1. Ուսուցչի նյութի մեջ գտեք դասը այն դասընթացի համար, որը դուք ուսուցանում եք կամ կուսուցանեք և կարդացեք ներգրավելու ներկայացված մոտեցումները։
2. Ընտրեք այդ մոտեցումներից որևէ մեկը։
3. Մտածեք, թե այդ վարժությունն ինչպիսի՞ ազդեցություն կունենա դասարանում։ Մտածեք այն մասին, թե ուսանողների փորձառության վրա ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ ներգրավելու այդ մոտեցումը:
4. Բացահայտեք ներգրավման մեկ այլ մոտեցում և կրկնեք այս գործողությունը:

Ներգրավման նման մոտեցումների և դրանց օգտագործման արդյունավետությանը ծանոթանալով, դուք կկարողանաք կենտրոնանալ ուսանողների վրա և ներգրավել նրանց ուսումնառության ավելի խորը փորձառության մեջ:

ԿԻՐԱՌԵԼ

Երբ, հիմնվելով ուսանողների պատրաստության վրա, ձգտեք մեծացնել դասարանի անդամների մասնակցությունը՝ հաշվի առեք հետևյալ հարցերը.

- Ուսուցանելու ժամանակ ինչպե՞ս եք կիրառելու այն, ինչ սովորել եք այս վարժություններից։
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի շարունակեք կիրառել այս հմտությունը և կարողանաք կատարելագործվել որպես ուսուցիչ:

ՔՆՆԱՐԿԵԼ

Ստորև բերված քննարկման պատուհանում գրեք, թե ինչ եք սովորել այդ փորձառությունից: Համոզվեք, որ կարդացել եք ուրիշների գրածները՝ տեսնելու համար, թե ինչ են սովորում և անում ուրիշները:

Կարևորել կիրառությունը

ՀՄՏՈՒԹՅՈՒՆ. ԿԱՐԵՎՈՐԵԼ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպե՞ս կկարևորեք կիրառությունը ձեր դասարանում: Ի՞նչ կանեք, որպեսզի խրախուսեք ձեր ուսանողներին գործել ըստ իրենց սովորածի:



Կարդացեք այս բաժինները և հետևեք հրահանգներին: Քննարկման պատուհանում գրեք այն, ինչ սովորում եք:

ՍԱՀՄԱՆԵԼ

Դասից առաջ ուսանողների և ուսուցիչների արդյունավետ նախապատրաստումը թույլ կտա ավելի շատ ժամանակ տրամադրել դասին՝ հնարավորություն տալով ուսանողներին հասկանալ, թե ինչպես են կիրառում դասի ընթացքում բացահայտած ճշմարտությունները: Ուսուցչի նյութը նախատեսված է ամրապնդելու ուսանողների պատրաստության ժամանակ սովորած գիտելիքը և օգնում է մեծացնել ուսանողների ուժն ու կարողությունները գործելու այնպես, որը կօգնի նրանց ավելի նմանվել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

ՆԱԽԱՏԻՊ

Ստորև կարող եք գտնել ծրագրային քննարկումների և հրավերների մի քանի օրինակներ, որոնք տրված են Հիմնական դասընթացի ուսումնական ծրագրում.

- «Ուսանողներին տվեք հետևյալ հարցերը. ինչպիսի՞ եղանակներով եք դուք և ձեր ընտանիքը մասնակցում ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքին: Ի՞նչ օրհնություններ եք ստացել դրա արդյունքում: Կարող եք հրավիրել ուսանողներին մտածել այն մարդու մասին, ով կարող է լինել նրանց խորհրդատուն՝ օգնելով կատարել ընտանեկան պատմության աշխատանքը: Եթե որոշ ուսանողներ արդեն փորձառու են ընտանեկան պատմություն կատարելու մեջ, հրավիրեք նրանց լինել դասարանի որևէ անդամի մենթորը»:
- «Ուսանողներին ժամանակ տվեք հետևյալ հարցի շուրջ խորհելու և իրենց մտքերը գրելու համար. ինչպե՞ս կարող եմ ավելի ակտիվ լինել Եկեղեցում և օգնել Եկեղեցու նպատակների իրականացմանը»:
- «Ցուցադրեք հետևյալ հարցը. ես ի՞նչ կանեմ, որ Հիսուս Քրիստոսի զորությունը հրավիրեմ իմ կյանք: Ժամանակ տրամադրեք, որ ուսանողներն աղոթքով խորհեն այս հարցի շուրջ և պատասխանը գրեն իրենց օրագրերում կամ նոթատետրերում: Երբ նրանք խորհեն ու մտածեն, կարող եք մի մեջբերում ցուցադրել վերջին օրերի մարգարեի կողմից, որպեսզի խրախուսեք, որ նրանք յուրահատուկ միջոցներով իրենց կյանք հրավիրեն Փրկիչի զորությունը»:

Այժմ, երբ տեսաք, թե ինչպես է ուսումնական ծրագիրն օգնում ձեզ կարևորել ուսանողի կիրառությունը, վարժվեք՝ ուսումնական ծրագրում կատարելով ուսուցման վարժությունները։

ՎԱՐԺՎԵԼ

Կատարեք հետևյալ քայլերը, որպեսզի գործնականում փնտրեք և օգտագործեք ուսուցման վարժությունները՝ կարևորելու համար ուսանողների կիրառությունը։

1. Ուսուցչի նյութի մեջ բացեք դասը այն դասընթացի համար, որը դուք ուսուցանում եք կամ կուսուցանեք և կարդացեք ուսուցման ներկայացված վարժությունները։
2. Ընտրեք ուսուցման այդ վարժություններից որևէ մեկը և ավելի ուշադիր կարդացեք վարժությունը և կիրառմանն առնչվող հարցերը։
3. Մտածեք, թե ուսուցման այս վարժությունը կամ տրված հարցերն ինչ ազդեցություն կարող ենք ունենալ ուսանողի փորձառության վրա:
4. Կրկնեք այս գործելակերպը՝ ուսուցչի նյութում ընտրելով մեկ այլ դաս, և նշելով ուսուցման այն վարժությունները, որոնք օգնում են կարևորել կիրառությունը:

Ծրագրային նման մոտեցումներին և դրանց օգտագործման արդյունավետությանը ծանոթանալով, դուք կկարողանաք կենտրոնանալ ուսանողների վրա և կօգնեք նրանց ավելի նմանվել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

ԿԻՐԱՌԵԼ

Երբ ձգտեք խրախուսել ուսանողներին և կարևորել կիրառությունը՝ հաշվի առեք հետևյալ հարցերը։ Գրի առեք ձեր մտքերը ստորև հատկացված քննարկման պատուհանում։

- Ուսուցանելու ժամանակ ինչպե՞ս եք կիրառելու այն, ինչ սովորել եք այս վարժություններից։
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի շարունակեք կիրառել այս հմտությունը և կարողանաք կատարելագործվել որպես ուսուցիչ:

ՔՆՆԱՐԿԵԼ

Ստորև բերված քննարկման պատուհանում գրեք, թե ինչ եք սովորել այդ փորձառությունից: Համոզվեք, որ կարդացել եք ուրիշների գրածները՝ տեսնելու համար, թե ինչ են սովորում և անում ուրիշները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Նորից շնորհակալություն, որ ընդունեցիք ձեր ուսանողներին օգնելու հնարավորությունը՝ ամրապնդելու իրենց դարձն առ Հիսուս Քրիստոսը և Նրա վերականգնված ավետարանը:

ՀԻՇԵ՛Ք.

- Տերը կառաջնորդի ձեզ, երբ ձգտեք օգնել ձեր ուսանողներին գալ Քրիստոսի մոտ և ավելի նմանվել Նրան:
- Ձեր համակարգողը կամ ինստիտուտի տնօրենը կարող են օգնել ձեզ ցանկացած հարցի կամ մտահոգության դեպքում:
- Հմտությունները, որոնք սահմանվել, ցուցադրվել և կիրառվել են այս դասընթացում, կարող են օգնել ձեզ ավելի արդյունավետ օգտագործել ուսումնական ծրագիրը՝ ձեր ուսանողներին օրհնելու նպատակով: Այս հմտությունները կօգնեն, որ ձեզ ուսանողները զարգանան և դարձի գան, մինչ փորձում եք օգնել նրանց պատրաստվել, մասնակցել և գործել, որպեսզի օգնեք նրանց նմանվել Փրկիչ Հիսուս Քրիստոսին: